*«Գրանցված է»*
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
*23 դեկտեմբերի 2009 թ.*
*Պետական գրանցման թիվ* 12409464

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

2 դեկտեմբերի 2009 թ. N 3660-Ն
ք. Երևան

# Հ Ր Ա Մ Ա Ն

## ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՎ ՈՒՂՂԻՉ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ, ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՄԻ ՇԱՐՔ ՀՐԱՄԱՆՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերին, 11-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝

*Հրամայում եմ*

1. Հաստատել`

1) հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալի և ուղղիչ գործակիցների մասին հայտարարության ձևը և լրացման կարգը` համաձայն N 1 հավելվածի,

2) հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության սահմանային չափի ցուցանիշների մասին հայտարարության ձևը և լրացման կարգը` համաձայն N 2 հավելվածի,

3) բաղնիքների և ցնցուղարանների կազմակերպման ոլորտում իրականացվող գործունեության համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի մասին հայտարարության ձևը և լրացման կարգը` համաձայն N 3 հավելվածի,

4) հյուրանոցային տնտեսության օբյեկտների գործունեության համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի մասին հայտարարության ձևը և լրացման կարգը` համաձայն N 4 հավելվածի,

5) ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնելու համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալի և ուղղիչ գործակիցների մասին հայտարարության ձևը և լրացման կարգը` համաձայն N 5 հավելվածի,

6) վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեություն իրականացնելու համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների մասին հայտարարության ձևը և լրացման կարգը` համաձայն N 6 հավելվածի,

7) ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեության համար հաստատագրված վճարների հաշվարկման ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի մասին հայտարարության ձևը և լրացման կարգը` համաձայն N 7 հավելվածի,

8) ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեության համար սահմանային չափերի ցուցանիշների մասին հայտարարության ձևը և լրացման կարգը` համաձայն N 8 հավելվածի,
9) բենզինի և(կամ) դիզելային վառելիքի մանրածախ վաճառքի գործունեության համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալների և ուղղիչ գործակցի մասին հայտարարության ձևը և լրացման կարգը` համաձայն N 9 հավելվածի,
10) ավտոկանգառների գործունեության համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալների և ուղղիչ գործակցի մասին հայտարարության ձևը և լրացման կարգը` համաձայն N 10 հավելվածի,
11) արդյունագործական ձկնորսության գործունեության համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների մասին հայտարարության ձևը և լրացման կարգը` համաձայն N 11 հավելվածի,
12) խաղատների գործունեության կազմակերպման համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալի մասին հայտարարության ձևը և լրացման կարգը` համաձայն N 12 հավելվածի,
13) շահումով խաղային ավտոմատների շահագործման համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալների մասին հայտարարության ձևը և լրացման կարգը` համաձայն N 13 հավելվածի,
14) ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման համար հաստատագրված վճարների հաշվարկման ելակետային տվյալների մասին հայտարարության ձևը և լրացման կարգը` համաձայն N 14 հավելվածի,
15) վիճակախաղերի կազմակերպման (բացառությամբ` տոտալիզատորի) համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալի մասին հայտարարության ձևը և լրացման կարգը` համաձայն N 15 հավելվածի,
16) տոտալիզատորի, ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման համար հաստատագրված վճարների հաշվարկման ելակետային տվյալների մասին հայտարարության ձևը և լրացման կարգը` համաձայն N 16 հավելվածի,
17) համակարգչային խաղերի կազմակերպման համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի մասին հայտարարության ձևը և լրացման կարգը` համաձայն N 17 հավելվածի,
18) բիլիարդ խաղի կազմակերպման գործունեության համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի մասին հայտարարության ձևը և լրացման կարգը` համաձայն N 18 հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել`
1) Հայաստանի Հանրապետության հարկային տեսչության պետի 1998 թվականի հուլիսի 28-ի «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10 հոդվածի 1-ին և 9-րդ կետերով, 11 հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված ձևերը հաստատելու մասին» N 01/42 հրամանը,
2) Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարի 2002 թվականի հուլիսի 2-ի «Ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնելու համար հաստատագրված վճարների հաշվարկման ելակետային տվյալի և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարության ձևը հաստատելու մասին» 02/867-Ն հրամանը,
3) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2007 թվականի հունվարի 30-ի «Տոտալիզատորի, ինտերնետ տոտալիզատորի, ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալի հայտարարության ձևերը և դրանց լրացման կարգերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության հարկային տեսչության 1998 թվականի հուլիսի 28-ի N 01/42

հրամանում փոփոխություններ կատարելու մասին» N 1-Ն հրամանը,

4) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2007թ սեպտեմբերի 7-ի «Խանութների, կրպակների (տաղավարների) առևտրական գործունեության և առևտրի իրականացման վայրերում առևտրական գործունեության համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների, սահմանային չափերի համապատասխան ցուցանիշների մասին հայտարարության ձևերը և դրանց լրացման կարգերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության հարկային տեսչության 1998 թվականի հուլիսի 28-ի N 01/42 հրամանում փոփոխություններ կատարելու մասին» N 11-Ն հրամանը:

**Գ. Խաչատրյան**

**Հավելված N 1**
**ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի**
**2009 թ. դեկտեմբերի 2-ի**
**N 3660-Ն հրամանի**

***Ձև***

________________________ հարկային
տեսչության պետ՝ _____________________

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼԻ ԵՎ ՈՒՂՂԻՉ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Վճարողի անվանումը ______________________________________________
2. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | | | | | | | | |
3. Հանրային սննդի օբյեկտի գտնվելու վայրը (հասցեն) ___________________________

4. Հանրային սննդի օբյեկտի տեսակը՝ ____________________________________

| | |
|---|---|
| 5. «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով սահմանված պատիկ թիվը | 2000 |

6. Հայտարարությունը ներկայացվում է 20 թ. _______________________________
______________________________________________ ամիսների համար
տառերով լրացվում են ամիսները

| 7. Ելակետային տվյալներ և ուղղիչ գործակիցներ | Շինությունների ներսում | Բացօթյա | Արտաքին բուֆետ |
|---|---|---|---|
| **Ելակետային տվյալ** | | | |
| 7.1. Սպասարկման մակերեսը (մ²) | | | |
| **Ուղղիչ գործակից** | | | |
| 7.2. Տարածքի օգտագործման | X | 0,7 | X |

| Լրացուցիչ ուղղիչ գործակիցներ | | | |
|---|---|---|---|
| 7.3. Բար-վարիետեների, բեմական ցուցադրումներ ունեցող այլ վայրերի (օբյեկտների), ինչպես նաև գիշերային ($24^{00}$-ից մինչև $6^{00}$) ժամերին աշխատող բարերի համար | | | X |
| 7.4. Սպառողների սահմանափակ քանակակազմ ունեցող վայրերի համար | | | X |
| 7.5. Ապրիլ - հոկտեմբեր ամիսների համար | X | 1.5 | X |
| 7.6. Հանրային սննդի օբյեկտի գտնվելու վայրի հետ կապված | | | |
| 8. Հաստատագրված վճարի ամսական չափը, դրամ | | | |
| 9. Ընդամենը հաստատագրված վճարի ամսական չափը, դրամ | | | |

| **Օբյեկտի զբաղեցրած սպասարկման սրահի (սրահների) մակերեսների հետ կապված լրացուցիչ ուղղիչ գործակից** | | | |
|---|---|---|---|
| մինչև 50մ$^2$ | մինչև 300մ$^2$ | 300մ$^2$ գերազանցող մակերեսի համար | 500մ$^2$ գերազանցող մակերեսի համար |
| **0.75** | **1.0** | **0.6** | **0.3** |

Վճարողի (պաշտոնատար անձի)ստորագրությունը
Կ. Տ.
_______________ 20  թ.

գրանցված է __________ ՀՏ կողմից թիվ ___ ______________ 20  թ.
Կ. Տ.

## ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼԻ ԵՎ ՈՒՂՂԻՉ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Հայտարարությունը լրացվում է երկու օրինակից և ներկայացվում հաստատագրված վճար վճարողի հաշվառման վայրի հարկային տեսչություն: Հարկային տեսչության կողմից հայտարարությունը հաշվառելուց (գրանցելուց) և կնքելուց հետո մեկ օրինակը վերադարձվում է հաստատագրված վճար վճարողին:

Գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի (հասցեի) համար ներկայացվում է առանձին հայտարարություն:

1-ին կետում լրացվում է հաստատագրված վճար վճարողի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը և ազգանունը,

2-րդ կետում լրացվում է հարկային մարմնի կողմից տրամադրված հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն),

3-րդ կետում լրացվում է հանրային սննդի գտնվելու վայրը (հասցեն),

4-րդ կետում լրացվում է հանրային սննդի օբյեկտի տեսակը,

6-րդ կետում հաջորդականությամբ լրացվում են գործունեության իրականացման ամիսները,

7.1-րդ կետում լրացվում է հաստատագրված վճարի չափի հաշվարկման համար ելակետային տվյալը՝ հանրային սննդի օբյեկտի սպասարկման սրահի մակերեսը (մ$^2$),

7.3-րդ կետում լրացվում է «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածով սահմանված լրացուցիչ ուղղիչ գործակիցը՝ 2.0,

7.4-րդ կետում լրացվում է սպառողների սահմանափակ քանակակազմ ունեցող վայրերի համար «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածով

սահմանված լրացուցիչ ուղղիչ գործակիցը (0.5),

7.6-րդ կետում լրացվում է հանրային սննդի օբյեկտի գտնվելու վայրի հետ կապված «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածով սահմանված լրացուցիչ ուղղիչ գործակիցը (0.7 կամ 0.5): Ընդ որում Գեղարքունիքի մարզում հուլիս և օգոստոս ամիսների համար 0.7 կամ 0.5 լրացուցիչ ուղղիչ գործակիցը չի կիրառվում:

8-րդ կետի համապատասխան սյունակում լրացվում է հանրային սննդի ոլորտում գործունեության իրականացման համար «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի համաձայն հաշվարկված հաստատագրված վճարի չափը՝ դրամով (2000 X ելակետային տվյալ X ուղղիչ գործակիցներ):

9-րդ կետում լրացվում է 8-րդ կետի սյունակների հանրագումարը՝ դրամով:

***(Հավելվածը փոփ. 15.02.11 N 55-Ն)***

**Հավելված N 2**
**ՀՀ ԿԱ պետական**
**եկամուտների կոմիտեի նախագահի**
**2009 թ. դեկտեմբերի 2-ի**
**N 3660-Ն հրամանի**

*Ձև*

_________________________ հարկային
տեսչության պետ՝ ____________________

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Վճարողի անվանումը ________________________________________
2. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | | | | | | | | |
3. Գործունեության իրականացման վայրը (հասցեն) ______________________

4. Հայտարարությունը ներկայացվում է 20 թ. __________________ եռամսյակի համար

| | Ցուցանիշը | Չափի միավոր | Թվային արտահայտությամբ |
|---|---|---|---|
| 1 | Սահմանային չափը | դրամ | |
| 2 | Եռամսյակի ապրանքաշրջանառության ծավալը | դրամ | |
| 3 | Հանրային սննդի սպասարկման մակերեսը | մ$^2$ | |
| 4 | Ապրանքաշրջանառության ծավալը սպասարկման մակերեսի մեկ մ$^2$ հաշվով (տող2 / տող3) | դրամ | |

Վճարողի (պաշտոնատար անձի)ստորագրությունը

գրանցված է __________ ՀՏ կողմից թիվ ___ ______________
20 թ.
Կ. Տ.

Կ. Տ.

______________ 20  թ.

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Հայտարարությունը լրացվում և ներկայացվում է գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի (հասցեի) համար առանձին:

Հայտարարությունը ներկայացվում է հաստատագրված վճար վճարողի հաշվառման վայրի հարկային տեսչություն:

1-ին կետում լրացվում է հաստատագրված վճար վճարողի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը և ազգանունը,

2-րդ կետում լրացվում է ՀՀ հարկային մարմնի կողմից տրամադրված հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն),

3-րդ կետում լրացվում է հաստատագրված վճար վճարողի գործունեության իրականացման վայրը (հասցեն),

4-րդ կետում լրացվում է գործունեության իրականացման այն եռամսյակը, որի համար ներկայացվում է հայտարարությունը:

Աղյուսակի 1-ին կետում լրացվում է «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սահմանային չափը, 2-րդ կետում` հանրային սննդի օբյեկտի եռամսյակի ապրանքաշրջանառության ծավալը, 3-րդ կետում` տվյալ հանրային սննդի օբյեկտի սպասարկման սրահի մակերեսը, իսկ 4-րդ կետում` տվյալ հանրային սննդի օբյեկտի սպասարկման սրահի մեկ քառակուսի մետրի հաշվով ապրանքաշրջանառության ծավալը (տող2 / տող3):

***(Հավելվածը փոփ. 15.02.11 N 55-Ն)***

**Հավելված N 3**
**ՀՀ ԿԱ պետական**
**եկամուտների կոմիտեի նախագահի**
**2009 թ. դեկտեմբերի 2-ի**
**N 3660-Ն հրամանի**

***Ձև***

_____________________ հարկային
տեսչության պետ` _________________

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՂՆԻՔՆԵՐԻ ԵՎ ՑՆՑՈՒՂԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼԻ ԵՎ ՈՒՂՂԻՉ ԳՈՐԾԱԿՑԻ ՄԱՍԻՆ

1. Վճարողի անվանումը _______________________________________________

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | | | | | | | | |

3. Գործունեության իրականացման վայրը ____________________________________

| | |
|---|---|
| 4. «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $36^{3}$-րդ | 2000 |

| | |
|---|---|
| հոդվածով սահմանված պատիկ թիվը | |

5. Հայտարարությունը ներկայացվում է 20 թ. __________________________________

______________________________________________ ամիսների համար

տառերով լրացվում են ամիսները

| Ելակետային տվյալ և ուղղիչ գործակից | Սաունաների և (կամ) շոգեբաղնիքների | Սաունաներում և (կամ) շոգեբաղնիքներում չընդգրկված բաղնիքների և (կամ) ցնցուղարանների |
|---|---|---|
| | | |
| **6. Ելակետային տվյալը՝** գործունեության կազմակերպման շենք-շինությունների ընդհանուր մակերեսը (մ²) | | |
| 7. Ուղղիչ գործակիցը | 1.0 | 0.5 |

| | |
|---|---|
| 8. Հաստատագրված վճարի չափը՝ ամսվա համար, դրամ | |

Վճարողի (պաշտոնատար անձի)ստորագրությունը
Կ. Տ.
_______________ 20 թ.

գրանցված է __________ ՀՏ կողմից թիվ ____ _____________
20 թ.
Կ. Տ.

## ԲԱՂՆԻՔՆԵՐԻ ԵՎ ՑՆՑՈՒՂԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼԻ ԵՎ ՈՒՂՂԻՉ ԳՈՐԾԱԿՑԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Հայտարարությունը լրացվում է երկու օրինակից և ներկայացվում հաստատագրված վճար վճարողի հաշվառման վայրի հարկային տեսչություն: Հարկային տեսչության կողմից հայտարարությունը հաշվառելուց (գրանցելուց) և կնքելուց հետո մեկ օրինակը վերադարձվում է հաստատագրված վճար վճարողին:

Գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի (հասցեի) համար ներկայացվում է առանձին հայտարարություն:

1-ին կետում լրացվում է հաստատագրված վճար վճարողի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը և ազգանունը,

2-րդ կետում լրացվում է հարկային մարմնի կողմից տրամադրված հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն),

3-րդ կետում բաղնիքների և ցնցուղարանների կազմակերպման գործունեության իրականացման վայրը (հասցեն),

5-րդ կետում հաջորդականությամբ լրացվում են գործունեության իրականացման ամիսները,

6-րդ կետում լրացվում է հաստատագրված վճարի չափի հաշվարկման համար ելակետային տվյալը՝ բաղնիքների և ցնցուղարանների կազմակերպման գործունեության կազմակերպման շենք-շինությունների մակերեսը՝ քառակուսի մետրով,

8-րդ կետում լրացվում է բաղնիքների և ցնցուղարանների կազմակերպման գործունեությունից «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36.3-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկված հաստատագրված վճարի չափը՝ դրամով (2000 X ելակետային տվյալ X ուղղիչ գործակից):

*(Հավելվածը փոփ. 15.02.11 N 55-Ն)*

**Հավելված N 4**
**ՀՀ ԿԱ պետական**
**եկամուտների կոմիտեի նախագահի**
**2009 թ. դեկտեմբերի 2-ի**
**N 3660-Ն հրամանի**

*Ձև*

_______________________ հարկային
տեսչության պետ՝ _________________

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼԻ ԵՎ ՈՒՂՂԻՉ ԳՈՐԾԱԿՑԻ ՄԱՍԻՆ

1.Հարկ վճարողի անվանումը ________________________________________

2. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | | | | | | | | |

3.Գործունեության իրականացման վայրը (հասցեն) __________________________

| | |
|---|---|
| 4. «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36[8]-րդ հոդվածով սահմանված պատիկ թիվը | 600 |

5. Հայտարարությունը ներկայացվում է 20 թ. _____________________________
______________________________________________ ամիսների համար
տառերով լրացվում են ամիսները

| | |
|---|---|
| 6. Հյուրանոցային տնտեսության օբյեկտի մակերեսը (մ²) | |
| 7. Հյուրանոցային տնտեսության օբյեկտի գտնվելու վայրի ուղղիչ գործակիցը | |
| 8. Հաստատագրված վճարի չափը՝ ամսվա համար, դրամ | |

Հարկ վճարողի
(տնօրենի անհատ
ձեռնարկատիրոջ)ստորագրությունը
_______________ 20 թ.

գրանցված է _________ ՀՏ կողմից թիվ ___
_____________ 20 թ.
Կ. Տ.

## ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼԻ ԵՎ ՈՒՂՂԻՉ ԳՈՐԾԱԿՑԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Հայտարարությունը ներկայացվում է զբոսաշրջության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի կողմից սահմանված չափանիշներին չհամապատասխանող հյուրանոցային տնտեսության օբյեկտի գործունեություն իրականացնողների կողմից:

Հայտարարությունը լրացվում է երկու օրինակից և ներկայացվում հաստատագրված վճար վճարողի հաշվառման վայրի հարկային տեսչություն: Հարկային տեսչության կողմից

հայտարարությունը հաշվառելուց (գրանցելուց) և կնքելուց հետո մեկ օրինակը վերադարձվում է հաստատագրված վճար վճարողին:

Գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի (հասցեի) համար ներկայացվում է առանձին հայտարարություն:

1-ին կետում լրացվում է հաստատագրված վճար վճարողի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը և ազգանունը,

2-րդ կետում լրացվում է հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն),

3-րդ կետում լրացվում է հաստատագրված վճար վճարողի փաստացի գործունեության իրականացման վայրը (հասցեն),

5-րդ կետում հաջորդականությամբ լրացվում են գործունեության իրականացման ամիսները,

6-րդ կետում լրացվում է հյուրանոցային տնտեսության օբյեկտի մակերեսը (մ²),

7-րդ կետում լրացվում է հյուրանոցային տնեսության օբյեկտի գործունեություն իրականացնելու համար հաստատագրված վճարի հաշվարկման համար «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36.10-րդ հոդվածով սահմանված համապատասխան ուղղիչ գործակիցը:

8-րդ կետում լրացվում է բաղնիքների և ցնցուղարանների կազմակերպման գործունեությունից «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36.8-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկվող հաստատագրված վճարի չափը` դրամով (600 X ելակետային տվյալ X ուղղիչ գործակից):

***(Հավելվածը փոփ. 15.02.11 N 55- Ն)***

**Հավելված N 5**
**ՀՀ ԿԱ պետական**
**եկամուտների կոմիտեի նախագահի**
**2009 թ. դեկտեմբերի 2-ի**
**N 3660-Ն հրամանի**

***Ձև***

________________________________ հարկային
տեսչության պետ` __________________________

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼԻ ԵՎ ՈՒՂՂԻՉ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Հաստատագրված վճար վճարողի անվանումը
___________________________________________
_____________________________________________________________________

2. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | |

3. Ավտոտրանսպորտային գործունեության միջոցի հետ կապված գործունեության տեսակը`
_____________________________________________________________________

| | |
|---|---|
| 4. «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության | 2000 |

| օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պատիկ թիվը | |
|---|---|

5. Հայտարարությունը ներկայացվում է 20 թ.

______________________________________________

______________________________________________________________ ամիսների համար

տառերով լրացվում են ամիսները

6. Հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալը և ուղղիչ գործակիցները`

| N | Ավտոմեքենայի | | Ելակետային տվյալը | Ուղղիչ գործակիցը | Լրացուցիչ ուղղիչ գործակիցը | Հաստատագրված վճարի ամսական չափը, դրամ | Օբյեկտի նույնականացման համարը` լրացվում է հարկային տեսչության կողմից |
|---|---|---|---|---|---|---|---|
| | մակնիշը | պետ. համարանիշը | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| Ընդամենը | | | | | | | X |

Կազմակերպության տնօրեն(անհատ ձեռնարկատեր) ______________________________ հաշվառված է__________
ստորագրությունը, անունը, ազգանունը
ՀՏ կողմից
թիվ

Հաշվապահ ______________________________ __________________
ստորագրությունը, անունը, ազգանունը

Կ. Տ.

Հայտարարության ստացման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը _______ ____________________ 20 թ.
(լրացվում է հարկային տեսչության կողմից)

## ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼԻ ԵՎ ՈՒՂՂԻՉ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնելու համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի մասին հայտարարությունը (այսուհետ՝ հայտարարություն) լրացվում է երկու օրինակից և ներկայացվում հաստատագրված վճար վճարողի հաշվառման վայրի հարկային տեսչություն: Հարկային տեսչության կողմից հայտարարությունը հաշվառելուց (գրանցելուց) և կնքելուց հետո մեկ օրինակը վերադարձվում է հաստատագրված վճար վճարողին: Ավտոտրանսպորտային գործունեության յուրաքանչյուր տեսակի՝ թեթև մարդատար ավտոմեքենաներով ուղևորափոխադրում, ավտոբուսներով (միկրոավտոբուսներով) գործունեություն կամ բեռնատար ավտոմեքենաներով գործունեություն, համար ներկայացնում է առանձին հայտարարություն: Ընդ որում, տվյալ ժամանակաշրջանի համար ներկայացված հայտարարության մեջ փոփոխություն կատարելու դեպքում նախապես գրավոր ներկայացվում է նոր հայտարարություն:

2. Հայտարարության ձևի 1-ին կետում լրացվում է հաստատագրված վճար վճարողի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը և ազգանունը:

3. Հայտարարության ձևի 2-րդ կետում լրացվում է հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն):

4. Հայտարարության ձևի 3-րդ կետում լրացվում է ավտոտրանսպորտային միջոցի հետ կապված իրականացվող ավտոտրանսպորտային գործունեության տեսակը՝ թեթև մարդատար ավտոմեքենաներով ուղևորափոխադրում, ավտոբուսներով (միկրոավտոբուսներով) գործունեություն կամ բեռնատար ավտոմեքենաներով գործունեություն:

5. Հայտարարության ձևի 5-րդ կետում հաջորդականությամբ լրացվում են գործունեության իրականացման ամիսները:

6. Հայտարարության ձևի 6-րդ կետի աղյուսակի՝

1) 2-րդ և 3-րդ սյունակներում լրացվում են ավտոմեքենայի մակնիշը և պետհամարանիշը: Կանոնավոր ուղևորափոխադրում իրականացնելու դեպքում 3-րդ սյունակում լրացվում է դեղին հիմնագույնի համարանիշը,

2) 4-րդ սյունակում լրացվում է ավտոտրանսպորտային գործունեության միջոցի հետ կապված հաստատագրված վճարի հաշվարկման համար ելակետային տվյալը՝

ա. թեթև մարդատար ավտոմեքենաներով ուղևորների փոխադրման համար՝ 1.0,

բ. ավտոբուսներով (միկրոավտոբուսներով) գործունեություն իրականացնելու համար՝ ավտոբուսի (միկրոավտոբուսի) նստատեղերի քանակը,

գ. բեռնատար ավտոմեքենաներով գործունեություն իրականացնելու համար՝ ավտոմեքենայի բեռնատարողությունը (տոններով),

3) 5-րդ սյունակում լրացվում է հաստատագրված վճարի հաշվարկման համար սահմանված ուղղիչ գործակիցը, այդ թվում՝

ա. թեթև մարդատար ավտոմեքենաներով ուղևորափոխադրման համար «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 41-րդ հոդված 1-ին մասով սահմանված համապատասխան ուղղիչ գործակիցը,

բ. ավտոբուսներով (միկրոավտոբուսներով) գործունեություն իրականացնելու համար երթուղիների հետ կապված Օրենքի 41-րդ հոդված 3-րդ մասի «ա» կամ «բ» ենթակետով սահմանված համապատասխան ուղղիչ գործակիցը,

գ. բեռնատար ավտոմեքենաներով գործունեություն իրականացնելու համար գոտիականության հետ կապված Օրենքի 41-րդ հոդված 2-րդ մասով սահմանված համապատասխան ուղղիչ գործակիցը,

4) 6-րդ սյունակում լրացվում է մինչև 17-ը ներառյալ նստատեղ ունեցող միկրոավտոբուսների համար Օրենքի 41-րդ հոդված 3-րդ մասի «գ» ենթակետով սահմանված լրացուցիչ ուղղիչ գործակիցը՝ 1.3,

5) 7-րդ սյունակում լրացվում է ավտոտրանսպորտային գործունեությունից հաստատագրված

վճարի ամսական չափը` դրամներով: Օրենքի 39-րդ հոդվածի համաձայն հաստատագրված վճարի ամսական չափը հաշվարկվում է`

ա. թեթև մարդատար մեքենաներով ուղևորափոխադրման համար` 2000 x 1.0 x ուղղիչ գործակից,

բ. 18 և ավելի նստատեղ ունեցող ավտոբուսով ուղևորափոխադրման համար` 2000 x նստատեղերի քանակ x ուղղիչ գործակից,

գ. միկրոավտոբուսով ուղևորափոխադրման համար` 2000 x նստատեղերի քանակ x ուղղիչ գործակից x լրացուցիչ ուղղիչ գործակից,

դ. բեռնատար ավտոմեքենայով բեռնափոխադրումների համար` 2000 x բեռնատարողություն x ուղղիչ գործակից,

6) 8-րդ սյունակը (օբյեկտի նույնականացման համարը) լրացվում է հաստատագրված վճար վճարողի հաշվառման վայրի հարկային տեսչության կողմից:

***(Հավելվածը խմբ. 15.02.11 N 55-Ն)***

**Հավելված N 6**
**ՀՀ ԿԱ պետական**
**եկամուտների կոմիտեի նախագահի**
**2009 թ. դեկտեմբերի 2-ի**
**N 3660-Ն հրամանի**

***Ձև***

______________________ հարկային
տեսչության պետ` ________________

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐՍԱՎԻՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՎ ՈՒՂՂԻՉ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Վճարողի անվանումը ________________________________________

2. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | | | | | | | | |

3. Վարսավիրանոցի գտնվելու վայրը ____________________________________

| | |
|---|---|
| 4. «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածով սահմանված պատիկ թիվը` | 500 |

| Ելակետային տվյալներ և ուղղիչ գործակից | Երևան | Մարզկենտրոն, Աբովյան և Վաղարշապատ քաղաքներ | Այլ վայրեր |
|---|---|---|---|
| 5. Վարսավիրական ծառայության մատուցման աշխատատեղ | | | |
| 6. Գտնվելու վայրի հետ կապված | 1.0 | 0.8 | 0.6 |

7. Հայտարարությունը ներկայացվում է 20 թ. հետևյալ ամիսների համար`

| **Ամիսը** | **Գործունեության իրականացման օրերը** | | | | | | | | | | | | | | | Ընդամենը | Ամսվա համար հաստատագրված վճարի չափը, դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | | |
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | | | |
| | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | | |
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | | | |
| | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | | |
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | | | |
| | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | | |
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | | | |
| | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | | |
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | | | |
| | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | | |

Վճարողի (պաշտոնատար անձի)ստորագրությունը
Կ. Տ.
_______________ 20  թ.

գրանցված է __________ ՀՏ կողմից թիվ ___ _____________
20  թ.
Կ. Տ.

## ՎԱՐՍԱՎԻՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՅՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՎ ՈՒՂՂԻՉ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Հայտարարությունը լրացվում է երկու օրինակից և ներկայացվում հաստատագրված վճար վճարողի հաշվառման վայրի հարկային տեսչություն: Հարկային տեսչության կողմից հայտարարությունը հաշվառելուց (գրանցելուց) և կնքելուց հետո մեկ օրինակը վերադարձվում է հաստատագրված վճար վճարողին:

Գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի (հասցեի) համար ներկայացվում է առանձին հայտարարություն:

1-ին կետում լրացվում է հաստատագրված վճար վճարողի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը և ազգանունը,

2-րդ կետում լրացվում է հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն),

3-րդ կետում լրացվում է հաստատագրված վճար վճարողի գործունեության իրականացման վայրը (հասցեն),

5-րդ կետում լրացվում է վարսավիրական ծառայությունների մատուցման աշխատատեղերի քանակը,

7-րդ կետի աղյուսակում «Ամիսը» սյունակում հաջորդականությամբ լրացվում են գործունեության իրականացման համապատասխան ամիսները՝ տառերով: «Գործունեության իրականացման օրերը» սյունակում գործունեության իրականացման օրերը պարտադիր նշվում են օղակով, իսկ հանգստյան օրերը՝ անկյունագծից անկյունագիծ խաչաձև ջնջելու միջոցով: Լրիվ ամիս (բոլոր օրերը) աշխատել նախատեսելու դեպքում օղակի ձևով նշումներ չեն կատարվում: «Ընդամենը» սյունակում լրացվում է համապատասխան ամսվա ընթացքում գործունեության իրականացման օրերի քանակը՝ թվով և տառերով: «Ամսվա համար հաստատագրված վճարի չափը, դրամ» սյունակում լրացվում է համապատասխան ամսվա համար հաստատագրված վճարի չափը՝ դրամով (500 x ելակետային տվյալ x ուղղիչ գործակից):

***(Հավելվածը փոփ. 15.02.11 N 55-Ն)***

Հավելված N 7
ՀՀ ԿԱ պետական

եկամուտների կոմիտեի նախագահի
2009 թ. դեկտեմբերի 2-ի
N 3660-Ն հրամանի

*Ձև*

______________________ հարկային
տեսչության պետ՝ _________________

# Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ԱՎՏՈՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ (ԿԵՏԵՐԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼԻ ԵՎ ՈՒՂՂԻՉ ԳՈՐԾԱԿՑԻ ՄԱՍԻՆ

1. Վճարողի անվանումը ____________________________________________
____________________________________________________________

2. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) |_|_|_|_|_|_|_|_|

3. Ավտոտեխսպասարկման կայանի (կետի) գտնվելու վայրը ______________________
____________________________________________________________

| | |
|---|---|
| 4. «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ հոդվածով սահմանված պատիկ թիվը | 15000 |

5. Հայտարարությունը ներկայացվում է 20 թ. ________________________________

_____________________________________________________ ամիսների համար
տառերով լրացվում են ամիսները

6. Տեխնիկական սպասարկման աշխատատեղերի քանակը ______________________
(թվով և տառերով)

7. Ավտոտեխսպասարկման կայանի (կետի) գտնվելու վայրի հետ կապված ուղղիչ գործակիցը՝ ____

8. Հաստատագրված վճարի ամսական չափը, դրամ _______________________

| | |
|---|---|
| Վճարողի (պաշտոնատար անձի)ստորագրությունը<br>Կ. Տ.<br>_______________ 20 թ. | գրանցված է __________ ՀՏ կողմից թիվ ___ _____________<br>20 թ.<br>Կ. Տ. |

## ԱՎՏՈՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ (ԿԵՏԵՐԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼԻ ԵՎ ՈՒՂՂԻՉ ԳՈՐԾԱԿՑԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Հայտարարությունը լրացվում է երկու օրինակից և ներկայացվում հաստատագրված վճար վճարողի հաշվառման վայրի հարկային տեսչություն: Հարկային տեսչության կողմից հայտարարությունը հաշվառելուց (գրանցելուց) և կնքելուց հետո մեկ օրինակը վերադարձվում է

հաստատագրված վճար վճարողին:

Գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի (հասցեի) համար ներկայացվում է առանձին հայտարարություն:

1-ին կետում լրացվում է հաստատագրված վճար վճարողի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը և ազգանունը,

2-րդ կետում լրացվում է հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն),

3-րդ կետում լրացվում է հաստատագրված վճար վճարողի փաստացի գործունեության իրականացման վայրը (հասցեն),

5-րդ կետում հաջորդականությամբ լրացվում են գործունեության իրականացման ամիսները,

6-րդ կետում լրացվում է լրացվում է ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման աշխատատեղերի քանակը,

7-րդ կետում լրացվում է «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55¹-րդ հոդվածով սահմանված համապատասխան ուղղիչ գործակիցը` Երևան քաղաքի համար 1.0, այլ վայրերի համար` 0.8:

8-րդ կետում լրացվում է ավտոտեխսպասարկման գործունեությունից «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ հոդվածի համաձայն հաշվարկվող հաստատագրված վճարի ամսական չափը` դրամով (15000 X ելակետային տվյալ X ուղղիչ գործակից):

***(Հավելվածը փոփ. 15.02.11 N 55-Ն)***

**Հավելված N 8**
**ՀՀ ԿԱ պետական**
**եկամուտների կոմիտեի նախագահի**
**2009 թ. դեկտեմբերի 2-ի**
**N 3660-Ն հրամանի**

***<u>Ձև</u>***

________________________________ հարկային
տեսչության պետ` __________________________

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ԱՎՏՈՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ (ԿԵՏԵՐԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Հաստատագրված վճար վճարողի անվանումը ____________________________________________
________________________________________________________________________________

2. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | |

3. Գործունեության իրականացման վայրը (հասցեն) _________________________________________
_____________________________________________________________________________________

4. Հայտարարությունը ներկայացվում է 20 թ. ______________________________ եռամսյակի համար

| | Ցուցանիշը | Չափի | Թվային |
|---|---|---|---|

| | | միավոր | արտահայտությամբ |
|---|---|---|---|
| 1 | Սահմանային չափը | դրամ | |
| 2 | Իրացման շրջանառությունը | դրամ | |
| 3 | Ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման աշխատատեղերի քանակը | տեղ | |
| 4 | Իրացման շրջանառությունը մեկ աշխատատեղի հաշվով (տող2 / տող3) | դրամ | |

Կազմակերպության տնօրեն(անհատ ձեռնարկատեր) ______________________________ հաշվառված է_________
ստորագրությունը, անունը, ազգանունը
ՀՏ կողմից
թիվ

Հաշվապահ ______________________________ __________________
ստորագրությունը, անունը, ազգանունը
Կ. Տ.

Հայտարարության ստացման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը ______ ____________________ 20 թ.
(լրացվում է հարկային տեսչության կողմից)

### ԱՎՏՈՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ (ԿԵՏԵՐԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Հայտարարությունը լրացվում և ներկայացվում է գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի համար` առանձին-առանձին: Հայտարարությունը ներկայացվում է հաստատագրված վճար վճարողի հաշվառման վայրի հարկային տեսչություն:

2. Հայտարարության ձևի 1-ին կետում լրացվում է հաստատագրված վճար վճարողի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը և ազգանունը:

3. Հայտարարության ձևի 2-րդ կետում լրացվում է հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն):

4. Հայտարարության ձևի 3-րդ կետում լրացվում է հաստատագրված վճար վճարողի փաստացի գործունեության իրականացման վայրը (հասցեն):

5. Հայտարարության ձևի 4-րդ կետում լրացվում է գործունեության իրականացման եռամսյակը:

6. Հայտարարության ձևի աղյուսակի`

1) 1-ին կետում լրացվում է «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սահմանային չափը` դրամով,

2) 2-րդ կետում լրացվում է ավտոտեխսպասարկման կայանի գործունեությունից տվյալ եռամսյակի իրացման շրջանառությունը` դրամով,

3) 3-րդ կետում ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման աշխատատեղերի քանակը,

4) 4-րդ կետում լրացվում է ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման մեկ աշխատատեղի հաշվով իրացման շրջանառությունը (տող 2/տող 3)` դրամով:

***(Հավելվածը խմբ. 15.02.11 N 55-Ն)***

**Հավելված N 9**
**ՀՀ ԿԱ պետական**

**եկամուտների կոմիտեի նախագահի
2009 թ. դեկտեմբերի 2-ի
N 3660-Ն հրամանի**

***Ձև***

______________________ հարկային
տեսչության պետ՝ ______________________

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### ԲԵՆԶԻՆԻ ԵՎ(ԿԱՄ) ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔԻ ՄԱՆՐԱԾԱԽ ՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՎ ՈՒՂՂԻՉ ԳՈՐԾԱԿՑԻ ՄԱՍԻՆ

1. Վճարողի անվանումը ______________________________________________
2. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | | | | | | | | |
3. Գործունեության իրականացման վայրը (հասցեն) ____________________________

| | |
|---|---|
| 4. «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պատիկ թիվը | 30000 |

5. Հայտարարությունը ներկայացվում է 20 թ. _________________________________
__________________________________________________ ամիսների համար
տառերով լրացվում են ամիսները

6. Բենզինի և(կամ) դիզելային վառելիքի մանրածախ վաճառքի կետում տեղակայված բենզալցման և(կամ) դիզելային վառելիքի լցման խողովակների քանակը

________________________________________________________
(թվով և տառերով)

7. Բենզինի և(կամ) դիզելային վառելիքի մանրածախ վաճառքի կետի գտնվելու վայրի հետ կապված ուղղիչ գործակիցը __________

8. Հաստատագրված վճարի ամսական չափը, դրամ ____________________

| | |
|---|---|
| Վճարողի (պաշտոնատար անձի)ստորագրությունը<br>Կ. Տ.<br>______________ 20 թ. | գրանցված է _________ ՀՏ կողմից թիվ ___ ____________<br>20 թ.<br>Կ. Տ. |

### ԲԵՆԶԻՆԻ ԵՎ(ԿԱՄ) ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔԻ ՄԱՆՐԱԾԱԽ ՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՎ ՈՒՂՂԻՉ ԳՈՐԾԱԿՑԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Հայտարարությունը լրացվում է երկու օրինակից և ներկայացվում հաստատագրված վճար վճարողի հաշվառման վայրի հարկային տեսչություն: Հարկային տեսչության կողմից հայտարարությունը հաշվառելուց (գրանցելուց) և կնքելուց հետո մեկ օրինակը վերադարձվում է հաստատագրված վճար վճարողին:

Գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի (հասցեի) համար ներկայացվում է առանձին հայտարարություն:

1-ին կետում լրացվում է հաստատագրված վճար վճարողի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը և ազգանունը,

